

# Մարզում բացվեց ևս մեկ բժշկական ամբուլատորիա

16.08.2013

Այսօր ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում բացվեց ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի առողջապահության բաժնի, ՀՀ առողջապահության նախարարության և Բաղրամյան համայնքի համատեղ ֆինանսավորմամբ կյանքի կոչված նորակառույց ամբուլատորիան: Նախկինում այն գտնվում էր Բաղրամյանի համայնքապետարանի առաջին հարկում՝ զբաղեցնելով 3 սենյակ:

Բացման արարողությանը ներկա էին ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը, ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, փոխմարզպետ Լարիսա Մուրադյանը, առողջապահության և այլ ոլորտների ներկայացուցիչներ: Մարզպետ Աշոտ Ղահրամանյանն իր խոսքում նշեց. «Առողջապահության ոլորտի կարգավորումը մարզի կարևոր ու գլխավոր խնդիրներից է, որը նկատելի առաջընթաց է ապրում: Մարզի 51 ամբուլատորիաներից 43-ը արդեն վերանորոգվել են: Սա նշանակում է, որ առաջիկա մի քանի տարիների ընթացքում հնարավորինս կնվազեն առկա խնդիրները»:

Ծանոթանալով նորակառույց ամբուլատորիայի պայմաններին ու բուժօժանոթությունների կազմակերպման հնարավորություններին՝ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը կարևորեց հետևյալը. «Շատ լավ է, որ կան այսպիսի բուժօժանոթություններ, բայց դեռևս առաջնային խնդիր է մասնագետներով ապահովելու հարցը: Ճիշտ կլինի, որ աշխատակիցները պարբերաբար դասընթացների մասնակցեն, վերապատրաստվեն»: Նա հույս հայտնեց, որ նման պայմաններում հենց իրենք՝ մասնագետները, հաճույքով և ավելի մեծ պատասխանատվությամբ կկատարեն իրենց աշխատանքը: